

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբջանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմբանության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Զոն Կոստիկի Կարապետյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 177 061 100 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
- 2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 177 061 100 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ


- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
Հ/հ՝ 900011033033
ՀՎՀՀ՝ 02704199
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


(ստորագրություն) Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և
ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Գյումրի, Վ.Սարգսյան 5
Հ/հ՝ 900218001080
ՀՎՀՀ՝ 05504455

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն (ղեկավար)


(ստորագրություն) Կ. Տ.

Զոն Կոստիկի Կարապետյան

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Զոն Կոստիկի Կարապետյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**


Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Ջոն Կոստիկի Կարապետյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-11/26-IS/IGES պայմանագրի գնի վերաբերյալ՝ 177 061 100 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները

կատարող՝



(ստորագրություն) Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝



(ստորագրություն) Կ. Տ.

Ջոն Կոստիկի Կարապետյան

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	12
Այլ պարբերականում հրապարակում՝	20
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	6

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝


(ստորագրություն)

Ջոն Կոստիկի Կարապետյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Գրիգորյան Վանանդ Գուրգենի



Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Հ դրամ»

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	160 848 000	32 169 600	40 212 000	40 212 000	48 254 400
2.	տնտեսական ծախսեր՝	9 480 300	1 896 060	2 370 075	2 370 075	2 844 090
3.	այլ ծախսեր՝	6 732 800	1 346 560	1 683 200	1 683 200	2 019 840
Ընդամենը՝		177 061 100	35 412 220	44 265 275	44 265 275	53 118 330

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝


 (ստորագրություն)

Ջոն Կոստիկի Կարապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Ծաղիկ Շահվալադի
 Հովհաննիսյան



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ն դրամ»

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	9 480 300
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	4 300 000
2.	գազի ծառայություն	2 300 000
3.	ջրամատակարարման ծառայություն	65 300
4.	կապի ծառայություն	1 150 000
5.	աղբահանություն	465 000
6.	վառելիք	1 200 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	6 732 800
1.	Սարք, սարքավորումներ	2 832 800
2.	Գործուղումներ	1 700 000
3.	Հայ-չինական ծրագրով նախատեսված սարքեր և այլ ծախսեր	2 200 000

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝



 (ստորագրություն)

Ջոն Կոստիկի Կարապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Ծաղիկ Շահվալադի Հովհաննիսյան



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. **Աշխատանքի նպատակը**

Իրականացնել գիտական հետազոտություններ, որոնք նպատակաուղղված են ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի ուսումնասիրմանը, էներգետիկ և հանքային, ջրային ռեսուրսների որոնման, հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների զարգացմանը, սեյսմիկականության և երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդիրների լուծմանը, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմակայունության տեսության մեթոդների կատարելագործմանը, երկրաֆիզիկական նոր սարքերի նախագծմանը և նրանց փոքրածավալ արտադրությանը:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները**

Իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան գիտական հետազոտություններ, որոնք կնպաստեն էներգետիկ, հանքարդյունաբերական, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, հանրապետության ազգաբնակչության սեյսմիկ պաշտպանության ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ծրագրի իրականացմանը:

Աշխատանքին ներկայացվող կարևոր պահանջներից է նրա կատարումը ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան, ինչպես նաև ստացված արդյունքների հանձնումը սահմանված ժամկետում:

4. **Աշխատանքի բովանդակությունը**

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի գիտական գործունեությունն առաջնորդվում է ՀՀ ԳԱԱ Նախագահության կողմից հաստատված ՀՀ ԳԱԱ 2021-2025 թթ. հիմնարար գիտական հետազոտությունների ծրագրով: Հիմնարար գիտական հետազոտությունների ծրագրի շրջանակներում ինստիտուտը երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության և ժամանակակից երկրաֆիզիկական սարքաշինության բնագավառներում 2021 թվականին որպես գիտական գործունեության հիմնական ուղղություններ նախատեսում է երկրակեղևի կառուցվածքի և նրանում ընթացող երկրադինամիկ պրոցեսների ուսումնասիրությունները, գունավոր և հազվագյուտ մետաղների հանքավայրերի հետախուզման և երկրաբնապահպանական, սեյսմիկ ռիսկի գնահատման երկրաֆիզիկական մեթոդների կատարելագործումը, Երկրի մագնիսական դաշտի և նրա վարիացիաների ուսումնասիրությունը, սեյսմաբանական մեթոդներով Հայաստանի տարածքի երկրակեղևի լարվածադեֆորմացիոն վիճակի և տարածաշրջանի երկրաշարժերի օջախների հետազոտումը, ՀՀ հրաբխային տարածքների ստորերկրյա ջրերի տարածական բաշխվածության օրինաչափությունների և հնագետահովիտների ջրերի օգտագործման հնարավորությունների պարզաբանման, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործումը, շենքերի և կառուցվածքների սեյսմակայունության տեսության կատարելագործումը, երկրաֆիզիկական ժամանակակից սարքերի մշակումը:

Նշված ծրագրի շրջանակում առանձին ուղղություններով կատարվող հետազոտությունները թույլ կտան ներկայացնել գիտակիրառական բնույթի կարևոր առաջարկներ, կապված

Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի հետ:

Նշված ուղղություններով նախատեսվող ուսումնասիրությունների արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը նպաստող այնպիսի կարևորագույն խնդիրների լուծմամբ, ինչպիսիք են Հայաստանի տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի, երկրաբնապահպանական իրավիճակի գնահատումը, կործանարար և ուժեղ երկրաշարժերի ուսումնասիրությունը և կանխագնահատումը, հանքահումքային բազայի ընդլայնումը, երկրաէներգետիկ այլընտրանքային պաշարների որոնումը, սեյսմակայուն շինարարության տեսական հիմքերի կատարելագործումը և ժամանակակից երկրաֆիզիկական սարքաշինության հայրենական արտադրության կազմակերպումը:

Ըստ նշված գիտական հիմնական ուղղությունների և բնագավառների 2026 թվականին երկրաֆիզիկայի ոլորտում նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

- Ֆիզիկական մեզոմեխանիկայի և աղետների տեսությունների հիման վրա մշակել Հայաստանի տարածքի և հարակից շրջանների հնարավոր ուժեղ երկրաշարժերի առաջացման գոտիների տարանջատման մեթոդական մոտեցումներ:
- Հետազոտել Հյուսիսային Հայաստանի հիմնական օջախային գոտիներում ուժեղ երկրաշարժերի նախապատրաստման ու առաջացման պրոցեսները՝ երկրաշարժի օջախի մեխանիզմի ընդհանրացված ֆիզիկական մոդելի և սեյսմիկ ռեժիմի քանակական պարամետրերի համադրական վերլուծության հիման վրա:
- Ուսումնասիրել Կովկասյան տարածաշրջանի ուժեղագույն $M \geq 7.0$ մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժերի սեյսմատեկտոնական լարումների ռելաքսացիոն պրոցեսները՝ օջախային գոտու երկրաբանական միջավայրի դեստրուկցիայի տեսանկյունից:
- Վերլուծել սեյսմիկ երկայնական ալիքի արագություններից ապարների խտություններին անցնելու էմպիրիկ կապերը և հաշվարկային եղանակով կազմել խտությունների ընդհանրացված նոր մոդել՝ երկրակեղևի հիմնական շերտերի սահմանները ճշտելու նպատակով:
- ՀՀ տարածքում առկա սեյսմիկ կայանների և սեյսմաերկրաբանական կտրվածքների տվյալների ելակետային տեղեկատվության մշակման ալգորիթմների կիրառմամբ կառուցել սեյսմիկ ալիքների արագությունների նոր ճշտված կորը:
- Երկրի հեղուկ միջուկի մակերևույթին ձևավորվող հոսքային համակարգերի հետազոտումը մագնիսական հիդրոդինամոյի հակադարձ խնդիրը կինեմատիկ մոտարկմամբ լուծելու միջոցով՝ պարզաբանելու համար գլխավոր երկրամագնիսական դաշտում բարձր հաճախային վարիացիաների և ջերքերի առաջացման մեխանիզմը:
- Երկրամագնիսական դաշտի իմպուլսային և պարբերական բնույթի վարիացիաների հետազոտումը Երկրի օրական պտույտի արագության վեկտորի բաղադրիչների սպեկտրալ վերլուծության արդյունքների հետ համադրման միջոցով:
- Ուսումնասիրել երկրամագնիսական դաշտի լոկալ վարիացիաները Գյուլագարակ դիտակայանի տվյալների միջոցով, կատարել ստացված արդյունքների համեմատական վերլուծություն միջազգային մոդելներում և հարակից դիտակայանների տվյալներում արտացոլված վարիացիաների հետ: Ուսումնասիրել անջատված լոկալ վարիացիաների բնույթը արեգակնային ու երկրամագնիսական ակտիվության ու սեյսմիկ իրադարձությունների հետ համադրման միջոցով:
- Ուսումնասիրել առաջնային ռադիոկտիվ աղբյուրի բազմապատիկ ցրման ճառագայթների և նրա կիրառման հնարավորությունները՝ ռենտգենառադիոմետրական մեթոդով հանքանյութի նմուշարկման և անալիզի ժամանակ:
- Գնահատել դիտարկված տվյալների մշակման վիճակագրական մեթոդների առանձնահատկությունները՝ երկրաֆիզիկական մեթոդների հնարավորությունների համեմատական գնահատման ժամանակ:
- Գնահատել երկրաֆիզիկական մեթոդներով խնդիրների լուծման հնարավորությունները՝ Հայաստանի հանրապետության տիպային հանքավայրերի ֆիզիկաերկրաբանական մոդելների հիման վրա:

- Իրականացնել ենթագրունտային ռադոնի էքսիդացիայի դինամիկայի փորձնամեթոդական ուսումնասիրություններ՝ պարզելու վարիացիաների առանձնահատկությունները կախված հիդրոոդերևութաբանական պայմաններից:
- Ֆիլտրացիոն պրոցեսների ուսումնասիրություններ շահագործվող ջրամբարներում համալիր երկրաֆիզիկական մեթոդների կիրառմամբ և հակաֆիլտրացիոն միջոցառումների առաջարկություններ (ՀՀ հատուկ նշանակության ջրամբարների տարածքում):
- Ուսումնասիրել Հայաստանի տարածքի երկրակեղևի ժամանակակից շարժումների վարիացիաներն ու դեֆորմացիաները՝ համալիր երկրաֆիզիկական տվյալների հիման վրա տարածաշրջանային ճեղքվածքա-բլոկային կառուցվածքի առանձնացման և մեծ գեոդինամիկական ակտիվությամբ տարածքների տարանջատման նպատակով (ներառելով «Գյուլագարակ» երկրամագնիսական դիտարանի տվյալները):
- Իրականացնել Կենտրոնական Հայաստանի հանքային աղբյուրների հիդրոերկրաքիմիական դաշտերի ժամանակավոր փոփոխությունների ռեժիմի ամենամյա դիտարկումներ, բացահայտել հիդրոգեոքիմիական էֆեկտների ազդեցությունները երկրաֆիզիկական մոնիտորինգի համակարգում և երկրաշարժերի կանխագուշակման մեջ:

Երկարաժամկետ (2022-2026 թթ.) գիտական ծրագրի՝ ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության տեսության ու պրակտիկայի և երկրաֆիզիկական սարքաշինության ուղղություններով իրականացվող խնդիրների արդիականությունը և նրանց հիմնավորումը պայմանավորված են ներքոհիշյալ կարևոր պրոբլեմների լուծմամբ.

- I. ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործում:
- II. Սեյսմակայունության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը՝ հաշվի առնելով շենքերի և կառուցվածքների կոնստրուկցիաների իրական աշխատանքը:
- III. Երկրաֆիզիկական սարքաշինություն:

Դուրս գալով գիտական հետազոտությունների ծրագրի նախանշված ուղղություններից, 2026 թվականին նախատեսվում է իրականացնել.

առաջին պրոբլեմի շրջանակում

- Սինթետիկ աքսելերոգրամաների մոդելավորում թույլ և ուժեղ երկրաշարժերի համար:
- Սեյսմիկ աղմուկների մշակման տարբեր մեթոդների մշակում հակադարձ խնդրի լուծման նպատակով:
- Տավրոս-Կովկասյան տարածաշրջանում սեյսմիկ ակտիվության վերլուծություն տարբեր մոդելների կիրառմամբ:

Երկրորդ պրոբլեմի շրջանակում

- Մշակել Երկրի էլեկտրոմագնիսական դաշտում երկրաշարժերի նախանշանների որոնման մեթոդիկա՝ λ , ν և α գրավիտացիոն լիցքերի հիման վրա:
- Հողակապով ամրակցված թիթեղի հարկադրական տատանումների հետազոտումը պտտական շարժման հաշվառումամբ:
- Շենքերի և կառույցների խոցելիության աստիճանի որոշման նպատակով մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը:

Երրորդ պրոբլեմի շրջանակում՝

- Արդիականացված տվիչներով հինգ սեյսմիկ կայանների նախագծում, պատրաստում, փորձարկում և տեղադրում:
- Բնապահպանական միջավայրի համար / ջրամբարներ և այլն/ ցնցումներ գրանցող զգայուն տվիչի պատրաստում, բնապայման փորձարկում:

Ուղղաձիգ դյուրակիր տատանողական հարթակի նախագծում, պատրաստում:

Ինստիտուտի գործունեության զգալի մասը զբաղեցնում է կիրառական հետազոտությունները: Սկսած մեթոդական հարցերից, մինչև տեխնոլոգիա, կիրառական բնույթի քարտեզներ, տարրաբնույթ սեյսմիկ տվիչներ, երկրաֆիզիկական դյուրակիր բազմաֆունկցիոնալ մոնիտորինգային համակարգեր, որոնք իրենց տեխնիկական բնութագրերով չեն զիջում միջազգային բրենդային ֆիրմաների կողմից արտադրվող սարքավորումներին, բացի այդ գնային և նորարական լուծումներով համարվում են մրցակցային: Նշված սարքավորումների

կիրառության ոլորտը բավականին լայն է և ընդգրկում է Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ, Բանակ, Քաղաքաշինություն, Էներգետիկա, Արդյունաբերություն: Ինստիտուտում իրականացվում են 10 ավելի կիրառական բնույթի ծրագրեր, որոնք ենթակա են առևտրայնացման և ունեն իրացման մեծ շուկա:

5. Ակնկալվող արդյունքներ. նախատեսվում է Ծրագրի շրջանակներում ստացված արդյունքները հրապարակել բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային Web of since, Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հոդվածներ և մենագրություններ: Բացի այդ մասնակցել առկա և հեռակա միջազգային գիտաժողովների, հանդես գալ բանավոր զեկույցներով և համապատասխանաբար ներկայացնել գիտական թեզիսներ: Ծրագրի իրականացման շրջանակներում դիտարկվում է որոշակի փուլում կատարված աշխատանքների լայն քննարկում շահագրգիռ կազմակերպությունների, գերատեսչությունների համապատասխան մասնագետների մասնակցությամբ: Կազմակերպել համակողմանի քննարկում, խնդրահարույց հարցերի բարձրաձայնում, ստացված տվյալների ներկայացում, քննարկում: Ծրագրի իրականացման և աշխատանքների կորդինացման համար նախատեսվում է լայնորեն կիրառել ցանցային հաղորդակցության (Skype, Zoom) հնարավորությունները, ինչպես նաև փոխադարձ այցելությունները:

Կազմակերպության տնօրեն՝



(ստորագրություն)

Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)




ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և դիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի (ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			Կատարման ժամկետները
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	
1	Երկրի ֆիզիկա, երկրադինամիկական պրոցեսներ, երկրաշարժագիտություն, օգտակար հանածոների և ջրային ռեսուրսների որոնում, սեյսմակայուն շինարարություն, գիտական սարքաշինություն: Գիտամեթոդական, գիտատեխնիկական և գիտակիրառական ուսումնասիրությունների իրականացում, համեմատական վերլուծություն:	Մեթոդական հարցերի մշակում, գիտակիրառական մեթոդների մշակում, համեմատական վերլուծություն: Գիտությունների Երկրի մասին բնագավառում «մեծ տվյալներ»-ի հետ աշխատանք: Ֆիզիկամաթեմատիկական մոդելներ:	Մեթոդների համեմատական գնահատում, ստացված տվյալների համակարգում և ներկայացում: Որակական և քանակական առնչությունների ներկայացում, մեթոդական, վիճակագրական մշակումներ և վերլուծություններ, քարտեզներ, գրաֆիկներ, կորեր և այլն:	01.01.2026-31.03.2026
2	Երկրի ֆիզիկա, երկրադինամիկական պրոցեսներ, երկրաշարժագիտություն, օգտակար հանածոների և ջրային ռեսուրսների որոնում, սեյսմակայուն շինարարություն, գիտական սարքաշինություն: Տեսական, գիտագործնական, հետազոտություններ, մոդելներ, ռեժիմային դիտարկումների իրականացում: Փորձակոնստրուկտորական աշխատանքներ:	Գիտակիրառական, գիտամեթոդական աշխատանքներ: Արհեստական բանականություն: Մեքենայական ուսուցում:	Մեթոդիկաների կատարելագործում, ստացված տվյալների ուսումնասիրում, դրված խնդիրների լուծում (շարունակական): Դիտարկումների արդյունքների վերլուծություն, մեկնաբանում, գիտական, գիտակիրառական նոր մոտեցումների առաջարկում:	01.04.2026-30.06.2026
3	Երկրի ֆիզիկա, երկրադինամիկական պրոցեսներ, երկրաշարժագիտություն, օգտակար հանածոների և ջրային ռեսուրսների որոնում, սեյսմակայուն շինարարություն, գիտական սարքաշինություն: Քարտեզների տարբերակների կազմում, լաբորատոր-փորձարարական հետազոտություններ: Գիտական սարքաշինություն:	Հաշվարկային ալգորիթմների ստեղծում, քարտեզների թվայնացում, լաբորատոր փորձարկումների իրականացում: Փորձնական նմուշների պատրաստում, կիրառություն, ներդրում ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում:	Հաշվարկների իրականացում, հավասարումների ստացում, քարտեզների տարբերակների կազմում: Հանքային և ջրային ռեսուրսների որոնման, երկրաբնապահպանական, սեյսմիկ անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գիտական, գիտակիրառական առաջարկների ձևակերպում, գնահատում: Ընթացիկ սեյսմիկ վիճակի մշտադիտարկում, սեյսմիկ վտանգի և դիսկի գնահատում:	01.07.2026-30.09.2026
4	Կատարված աշխատանքների, հետազոտությունների և ստացված արդյունքների ամփոփում: Հաշվետվության պատրաստում:			01.10.2026-31.12.2026

Կազմակերպության տնօրեն՝



(ստորագրություն)

Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)